

616.9  
62-92



Ռ. ԱՐՄԵՆՅԱՆ

ՍԻԲԻՐԱԿԱՆ

Արմ.

Հ2-33142

Ո. ԱՐՄԵՆՅԱՆ

30 JUL 2010

616.9

62-99

# ՍԻԲԻՐԱԿԱՆ

Г.П.Б. в Лнгрд

Л. 1934 г.

Акт № 165

21061

26 FEB 2013

6719

ԱԿՈՏ ՀԱՅ Օ Տ

## ԻՆՉ Ե ՍԻԲԻՐԱԽՏԸ

Սիբիրախտը վարակիչ հիվանդություն ե.  
զրանով հիվանդանում են ընտանի կենդանիները,  
հիվանդանում են նաև մարդիկ:

Գյուղացիները շատ լավ ծանոթ են այդ հի-  
վանդությանը և նրանք այդ հիվանդությունն  
անվանում են գալաղ, վորը թուրքերն բառ ե,  
նշանակում ե փայծաղ, վորովհետև սիբիրախ-  
տից սատկած կենդանիների փայծաղը չափեց  
դուրս մեծացած ե լինում: Գյուղացիները կար-  
ծում են, վոր կենդանիների փայծաղն ուռչում  
է սառը ջուր խմելուց, վորը միանգամմայն սխալ  
է: Ցերբենն ել այս հիվանդությունն անվանում  
են յաման; Վորովհետև կենդանու մարմնի զա-  
նազան մասերի վրա ուռուցք ե առաջանում:

## ԻՆՉԻՑ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ՍԻԲԻՐԱԽՏ ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅՈՒՆԸ



Գատ. խմբագիր  
Սրբազրիչ՝ Խ. Այվազյան  
Հանձնվել ե արտադրության 1934 թ. Մայիսի 23-ին  
Ստորագրված ե տպագրելու 1934 թ. հունիսի 4-ին  
Քլավիոր լիազոր № 256  
Հրատ. № 100, պատվեր № 366, տիրաժ 2000  
ՏԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՂՐԱՄԻ ՏՄԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50


9135-87

Բոլոր վարակիչ հիվանդությունների պատ-  
ճառը հատուկ մանրեներն են, վորոնք շատ մանր  
և հասարակ աչքով տնտեսանելի եյակներ են:

Մանրեներին կարելի յե տեսնել միայն մանրադիտակ (միկրոսկոպ) կոչված հատուկ խոշորացնող դորձիքների միջոցով:

Սիբիրախտ հիվանդությունն առաջացնում են նույնպես հատուկ մանրեներ, վորոնք կոչվում են սիբիրախտի մանրեներ:

Սիբիրախտի մանրեն մտնելով կենդանու մարմնի մեջ, սկսում է այնտեղ ապրել, մնվել,




Սիբիրախտի մանրեներ

բազմանալ և արյան միջոցով տարածվել մարմիքուր մասերը. նրանք հատուկ նյութեր (տոկոսին) են արտադրում, վորոնք թունավորում են

ամբողջ մարմինը: Յեթե սիբիրախտի մանրեն հարկադրված ե լինում կենդանու մարմից գուրսապրել, նա տալիս է հատուկ սերմեր կամ սպորներ, վորոնք հողի մեջ ապրում են յերկար տարիներ:

Սիբիրախտի սերմերը շատ գիմացկուն են, արևի ճառագայթների ազդեցության տակ նրանք



Սիբիրախտի մանրեներն սպորներով

յերկար ժամանակ պահպանում են իրենց գոյությունը: Չորացած վիճակում կարող են ապրել տարիներով 18 տարուց ավել և միայն ախտահանիչ նյութերը կարող են նրանց վոչնչացնել:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՍԻԲԻՐԱԽՏԱՎ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ՄԻԵՒՐԱԽՄՈՎ ՎԱՐԱԿՎՈՎՄ ԵՆ  
ԳԼԽԱՎՈՐԱՍՂԵՍ ԲԵՐՆԻ, յԵՐԵՄՆ ԵԼ ԿԱՇՎԻ և հազ-  
ՎԱՋՈՎՈՎ ԴԵՎՔԵՐՈՎՄ ԹԻՔԵՐԻ ՄԻջոցով:

ՍԻԲԻՐԱԽՄՈՒ ԱՊՈՐՆԵՐԸ ՀՈՂԻ ՄԵջ ապրում  
ԵՆ յԵՐԿԱՐ ՄԱՐԻՆԵՐ, ՆՈւյնիսկ 18 ՄԱՐՈՒց ավե-  
լի. այդպիսի ՎԱՐԱԿՎԱԾ ՄԵղերում արածող կեն-  
դանիները շատ հեշտությամբ կարող են ՎԱՐԱԿ-  
ՎԵԼ ՎԱՐԱԿՎԱԾ ՄԵղերի խոտով կերակրվելիս:

ՍԻԲԻՐԱԽՄՈՒ ՄԱՐԱԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ պատճառն  
այն ե, վոր գյուղերում, նույնիսկ մեծ կողտնտե-  
սություններում, անամսապահական ապրանքային  
ֆերմաներում և մի շարք խորհուտեսություն-  
ներում գոյություն չունեն կենդանիների հա-  
տուկ գերեզմանոցներ: Գյուղերում ընդհան-  
րապես սատկած կենդանիների գիտակները խորը  
չեն թաղում և կամ բոլորովին չեն թաղում. հա-  
ճախ կաշին քերթում են և դիակը զցում են  
դաշտը կամ շների առաջ: Այդ գեափում, յեթե  
կենդանին սիբիրախմուց ե սատկել, այն հողը,  
վորտեղ գտնվում ե դիակը, վարակվում ե սիբի-  
րախմու սպորներով և տարիներով վարակման  
աղբյուր ե դառնում:

Սակայն սիբիրախմու վարակը միայն այն-  
տեղ չի մնում. գիշատիչ թոշունները, շները,  
գայլերն ու աղվեսները այդ դիակի մասերը

ցըվում են և այդպիսով վարակը տարածում են  
ամեն կողմ:

Սիբիրախմու սպորներով վարակված արո-  
տավայրերը յԵրկար ժամանակ վտանգավոր են:  
Յուրաքանչյուր ու սառնամանիքը, հեղեղումներն ու  
նույնիսկ կիզիչ շոգն անգոր են ամբողջապես վո-  
չնչացնել սիբիրախմու սպորները: Ընդհակառա-  
կը, հեղեղները, գարնանային և աշնանային յԵրա-  
նակներին, ծածկելով վարակված արոտավայրերն  
ու գաշտերը՝ իրենց ախրմի հետ միասին սի-  
բիրախմու սպորներն ել տարածում են ամեն  
կողմ և այսպիսով վարակում են սիբիրախմուց  
մինչեւ այդ աղատ յԵղած արոտավայրերն ու գաշ-  
տերը:

Մինչդեռ, յԵթե սիբիրախմուց սատկած կեն-  
դանիների գիտակն առանց կաշին քերթելու թա-  
ղում են խորը, հատուկ անամսագերեզմանոցնե-  
րում, այդ գեափում մարմին մեջ գտնվող սիբի-  
րախմու մանրեները հնարավորություն չեն ունե-  
նում սպորներ տալու և 3—4 որվա ընթացքում  
վոչնչանում են: Սակայն, այնուամենայնիվ, կեն-  
դանու բերնից, քթից և հետույքից հոսած արյու-  
նախառն հեղուկի թափված տեղերում սիբիրախ-  
մու սպորներ մնում են և դրանց կարելի յԵ վո-  
չնչացնել ախտահանման միջոցով:

Յեթե սիբիրախմուց սատկած կենդանու կա-

շին յերբում ե, կաշին նույնպես կարող ե վարակի տարածման պատճառ հանդիսանալ. նաև՝ կաշին քերթողը ինքը կարող ե վարակվել քերթելու ժամանակ, յերկրորդ՝ յերբ կաշին չորացնելու համար կախում են մարագում կամ փըռում են, կաշին վարակում ե դարձմանը, խոտը և այլն:

Կենդանիները սիրիրախտով կարող են վարակվել նաև իրենց կաշվի միջոցով։ Կենդանու կաշվի վրա գտնվող վերքերի, քերծվածքների և նույնիսկ ամենամանը, անտեսանելի ճարվածքների միջոցով սիրիրախտի սպորները կամ մանրեները կարող են մտնել կենդանու մարմնի մեջ։ Այս ձեռվ կենդանիները կարող են վարակվել վարակված կերի, ջրի, գոմերում գտնվող վարակված իրերի, հիվանդ կենդանիներին խնամող մարդկանց շորերի և այլնի միջոցով։ Վարակը կարող են փոխադրել նաև ճանձերն ու բուերը։

Յեկ վերջապես կենդանիները սիրիրախտով կարող են վարակվել նաև քթածակերի միջոցով, այսինքն՝ սիրիրախտի սպորներով վարակված փոշին շնչելով։

Սիրիրախտ հիվանդությունը կարող ե պատճել տարվա բոլոր յեղանակներին, սակայն գըլխափրափես ուժեղանում ե ամուսնը, փորովիետե ամուսնը կենդանիները գտնվում են արոտա-

վայրերում, և յեթե արոտավայրը սիրիրախտով վարակված ե, այնտեղ արածող կենդանիները հեշտությամբ կարող են վարակվել։

Ամառվա յեղանակը խիստ նպաստավոր ե սիրիրախտի մանրեների և սպորների զարգացման ու տարածման համար։ Այդ յեղանակին շատանում են ամեն տեսակի կծող և խայթող միջատները, վորոնք նպաստում են վարակի տարածմանը։

Սիրիրախտը համարյա ամեն տարի կրկնվում ե վարակված վայրերում, վորովիետե մի անգամ վարակված արոտներն ու գաշտերը սիրիրախտի տարածման մշտական աղբյուրներ են հանդիսանում։ Հայաստանում կան մի քանի շրջաններ, վորատեղ այդ հիվանդությունը տարեց տարի կրկնվում ե, մանավանդ մի քանի գյուղերում։ Որինակ, Ստեփանավանի շրջանում Շահնազար գյուղում, Թալինի շրջանում Ակկո և Գյալթո գյուղերը, Արթիկի շրջանում Ղաղանչի և Փանիկ գյուղերը, Մարտունու շրջանում Գյոլգյուղը, Վեղիկի շրջանում Դավալու և Ռեհանլու գյուղերը և այլն։ Իսկ սիրիրախտի յերակի դեպքեր նկատվում են ամեն տարի բազմաթիվ գյուղերում։

ՎՈ՞Ր ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԵՆ ՍԻՐԻՐԱԽՏՈՎ  
ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ

Սիրիրախտով կարող են հիվանդանալ բոլոր տեսակի ընտանի կենդանիները, սիրիրախտով հի-

վանդանում են նաև մարդիկ, սակայն ընդհանը սպես սիրելու ամենից շատ հիշանդանում են վոչխարները, հետո յեզներն ու խոշոր յեղավոր անասունները. խողերը նույնպես հիվանդանում են, բայց համեմատաբար ավելի քիչ: Նկատված ե, վոր միենույն տեսակի կենդանիների վորոշ ցեղին պատկանողները կարող են ավելի շատ վարակվել սիրելու ամսով, իսկ մի ուրիշ ցեղին պատկանողները՝ ավելի քիչ: Կենդանիների տարիքը նույնպես վորոշ գեր ե կատարում. մատղաշներն ավելի թեթև են հիվանդանում, քան մեծահասակները: Ապրուստի, խնամքի և կլիմայական պայմանները նույնպես ազդում են. քաղցր, հոգնածությունը, ցուրան ու շոգը կենդանիներին ավելի շուտ են տրամադրում հիվանդանալու: Մարսողական գործարանների հիվանդությունները նմանապես նպաստում են կենդանիների ավելի հեշտությամբ վարակվելուն:

Սիրելու մի անգամ հիվանդացած և առողջացած կենդանին, առհասարակ, այդ հիվանդության գեմ յերկարատև վարակամերժում (իմունիտետ) ե ձեռք բերում, այսինքն՝ նա հետագայում յերկար ժամանակ, մոտ մի տարի, այդու սիրելու մի վարակվում:

### ՄիբիրԱլօֆ ՀիվանդութՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ

Կենդանին սիրելու ամսով վարակվելուց առմիջապես հետո չի հիվանդանում, անցնում է

2- 3- 4 որ, հազվագյուտ դեպքերում մինչև 10 որ, վորից հետո հիվանդության նշաններն ըստ կուռմ են յերեալ: Վաշակվելուց մինչև հիվանդության յերեալն անցնող այդ ժամանակաշրջանը կոչվում է հիվանդության թագուն օրշան: Այս թագուն շրջանը բոլոր վարակիչ հիվանդություններն ել տնին և այդ շրջանն անցնելուց հետո միայն սկսում են յերեալ հիվանդության նշանները:

Վորոնք են սիրելու նշանները.—

Սիրելու նշաններն են, կենդանին վնասմ և թույլ, տիտուր, ուժասպառ, շնչում և արագարադարձությունը, ցուրան ու շոգը կենդանիներին ավելի շուտ են տրամադրում հիվանդանալու: Առողջ կենդանիների շերմաստիճանը բարձրանում է: Առողջ կենդանիների շերմաստիճանը լինում է 37,5—39,5 աստիճան (ծելս.), մինչդեռ հիվանդների շերմաստիճանը 40 աստիճանից պակաս չի լինում, յերբեմն բարձրանում է մինչև 42 աստիճան: Այդ ժամանակ սիրելու մանրենելն սկսում են յերեան գալ արյան մեջ և արագորեն բազմանալով տարածվում են մարմինի բոլոր մասերում: Յերե այդ արյունից մի կարիլ առողջ կենդանու կամփի տակ սրսկի կամ մարդու ձևությի գրա գտնվող մի ենթվածքի խվի, թե՛ կենդանին յեվ թե մարդու անխուսափելու համար սիրելու կվարակվեն սիրելու ամսով:

Սիրիախտ հիվանդությունը շատ կարծ տևողություն ունի: Շատ հաճախ, նույնիսկ հիվանդությունը դեռ չնկատված, կենդանին, վորն ըստ յերևույթին առողջ ե յերևում, հանկարծ ընկնում ե ջղաձգությունների մեջ, խիթի (սանջույի) նշաններ ե ցույց տալիս, սկսում ե խոփոացնել քթից և բերնից այրունախառն փըրփուռ ե գալիս, հետանցքից արյուն ե հոսում և կարծ ժամանակվա ընթացքում կենդանին սատկում ե: Սիրիախտից սատկած կենդանու փորըն արագ կերպով ուռչում ե: Յեթե կենդանու փորը բացվի, նկատվում ե, վոր փայծաղը (դալաղը) խիս մեծացել ե. դրա համար ել, ինչպես սկզբում ասացինք, դյուղացիներն ասում են, վոր կենդանին դալաղ ե յեղել և այդ հանգամանքը վերագրում են սառը ջուր խմելուն, վորն, ի հարկե, սխալ ե: Սառը ջուր խմելուց կենդանու փայծաղը յերբեք չի ուռչի:

Սիրիախտի նշաններից մեկն ել այն ե, վոր կենդանու արյունը կպրի նման սեկացած ե լինում և յերբեք չի մակարդվում (չի լյարդանում):

Սիրիախտով հիվանդ կենդանին սկզբում փորկապություն ե ունենում, վորը հետո փոխվում ե լուծի, վոր յերբեմն լինում ե այրունախառն: Կթու կենդանիների կաթը կտրվում ե:

Յերբեմն հիվանդությունը կարող ե 2—3 որ և ավելի տևել: Այդ գեպքում կենդանու մարմարի զանազան մասերի վրա, գլխավորապես վզի, կրծքի, փորի, ամորձիքների (ձվաների) կամ կուրծի վրա ուռուցքներ են գոյանում: Այդ ուռուցքները նախապես տաք են լինում, իսկ հետո սառում են և խմորի նման կակում, յերբեմն ել լինում են կարծը: Ուռուցքներին ձեռք տալիս չեն խշաշում, զրանով ել այս հիվանդությունը տարբերվում ե խշաշուկ կոչված հիվանդությունից: Հիվանդության այս ձևերը կյուղացիները յաման են անվանում:

Ինչպես ասացինք, հիվանդությունը շատ կարծ է տևում, մի քանի ժամ: Ասկայն յերբեմն ել կարող ե 2—5 որ տևել: Սիրիախտից հիվանդացած կենդանիներից շատ էին են ազատվում, իսկ յեթե հիվանդությունը յերկար է տևում, կենդանին յերբեմն կարող ե առողջանար:

Խոզերի սիրիախտն առանձնահատուկ նշաններ ունի: Նրանց ստորին ծնուալ տակ, բկի տակի կաշին կարմրում ե և այնտեղ կակուղ ուռուցք է գոյանում, այդ պատճառով խոզերը դժվարությամբ են կուլ տալիս կերը: Բգի տակից այդ ուռուցքը կարող ե տարածվել նաև յերեսի վրա: Այդ ուռուցքի հետևանքով անառունի շնչառությունը՝ դժվարանում ե և նա վերջ ի վերջո խեղդաման ե լինում:

ԿՅՐԵԼԻ ՅԵ ԲԺՇԿԵԼ ՄԻՔԻՐԱԽՈՑԸ

Սիբիրախտով հիվանդ կենդանին, մանավանդ յեթե հիվանդությունը նոր ե սկսել, կարելի յե բժշկել հատուկ պատրաստված հակասիբիրախտային շիջուկով:

Հակասիբիրախտային շիջուկը պատրաստվում ե նախապես սիբիրախտով հիվանդացած և առողջացած կենդանիների արյունից: Այդպիսի կենդանիների արյան մեջ գոյանում ե սիբիրախտի հակաթույն: Վորը վոչնչացնում ե սիբիրախտի մանրեներին, և այդ արյունից պատրաստված շիջուկը—յեթե սրսկվի սիբիրախտով հիվանդ կենդանու կաշվի տակ, կենդանին կարող ե առողջանալ:

Յեթե սիբիրախտի ուռուցքներ են գոյացած լինում, այդ ուռուցքները կարելի յե խաչրել (գաղել) և կամ կտրել ու ախտահանիչ նյութերով լվանալ: Սակայն վերոնիշյալ գործողությունը խիստ վտանգավոր ե, վորովհետև վերքերից հոսող այրունը կամ ուռուցքից դուրս թափված հյութերը կարող են հիվանդության տարածման պատճառ դառնալ, վորի համար միշտ պետք ե դիմել անամնաբուժին:

Սակայն սիբիրախտի բժշկությունը կորցնում ե իր նշանակությունը, վորովհետև հաճախ

իվանդությունը շատ կարճատե ե և մինչև հիվանդին ոգնություն հանցնելը, նա սատկում ե: Այս պատճառով ել ահճաժեշտ ե ձեռք առնել այն բոլոր նախազգուշական միջոցները, վորովհ հնարավորություն են տալիս կենդանիների վարակման առաջն առնել: Այս խնդիրը վերաբերում ե վոչ միայն սիբիրախտին, այլ նաև բոլոր տեսակի հիվանդություններին, վորովհետև առհասարակ ավելի հեշտ ե անասունի հիվանդանալու առաջն առնել, քան թե նրան բժշկել:

ԿԵՆԴԱԿՆԵՐԻ ՍԻԲԻՐԱԽՈՑԸ, ՀԻՎԱՆԴԱՆ  
ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես տեսանք, սիբիրախտի սպորները խիստ դիմացելուն են և յերկար ժամանակ կարող են հողի մեջ ապրել: Հետեւաբար մեր բոլոր միջոցառումները պետք ե ուղղված լինեն այդ սպորների դեմ, այսինքն՝ պետք ե աշխատել, վորովհետքի հողը չվարակվի սիբիրախտի սպորներով, իսկ վարակված դեպքերում պետք ե աշխատել այդ վարակը վոչնչացնել:

Սիբիրախտի դեմ հաջող պայքար տանելու համար մեր միջոցները պետք ե կըն հետափուտական և սիստեմատիկ բնույթ: Անհճաժեշտ ե հաշվի առնել սիբիրախտի տարածման բոլոր մի-

Հոցները և ըստ այնմ կազմակերպել նրա դեմ  
պայքարի միջոցառումները:

Վորոնք են այդ պայքարի միջոցառումները.

1. Անկախ նրանից, թե տվյալ վայրում սիրիակախտ գոյություն ունի թե վոչ, յուրաքանչյուր գյուղսորհուրդ, խորհանտեսություն կամ կոլտնտեսություն իրեն յենթակա հողամասը, արոտներն ու ջրաբները (Ջելատեղերը) պետք ե կանոնավոր կերպով մաքրի ամեն տեսակի փակներից ու նրանց մնացորդներից, վոսկորներից և այն, մասավանդ գարնանն անասուններին արոտավայր ուղարկելուց առաջ:

Կանոնավորել հավաքած դիակների փոխադրումը, վորի համար յուրաքանչյուր քաղաք, գյուղ, կոլտնտեսություն, ապրանքային ֆերմա կամ խորհանտեսություն պիտի ունենա հատուկ սայլ, մեջը ցինկով պատած և դիակները պիտի փոխադրվեն միայն այդպիսի սայլով:

2. Պարբերաբար պետք ե մաքրել և կարգի բերել անասունների ջրաբները:

3. Յուրաքանչյուր քաղաք, խորհանտեսություն, կոլտնտեսություն, ապրանքային ֆերմա պետք ե առանձնացնի գյուղից հեռու հատուկ հողամաս անասագերեցմանոցի համար և հետեւ, վորպեսզի միայն այստեղ թալվեն սատկած անասունները:

Անամնագերեզմանոցի տեղը պետք ե վորոշել հատուկ հանճնաժողովի միջոցով՝ անամնաբուժական կազմի մասնակցությամբ:

Վերոհիշյալ միջոցառումները պետք ե ձեռք առնվեն անպայման և ամեն տեղ, առանց նկատի ունենալու՝ թե տվյալ վայրը սիրիակախտով վարակված ե, թե վոչ:

Իսկ այն վայրերում, վորտեղ սիրիակախտ հիվանդությունը պարբերաբար նկատվում է, բայցի վերոհիշյաներից, պետք ե ձեռք առնել նաև հետեւյալ միջոցները:

1. Չորացնել վարակված վայրում գտնվող ճահճային հողամասերը, արոտավայրերը, խոտհարքներն ու արոտները.

2. Հատուկ ջրամբարներ, ջրհորներ պատրաստել անասուններին ջրելու համար և փակել վարակված ջրամբարներն ու ջրհորները.

3. Ախտահանել վարակված շինություններն ու գոմերը.

4. Եթե կան այնպիսի տեղեր, վորտեղ թաղված են սիրիակախտից սատկած անասուններ, այդպիսի տեղերը պետք ե ցանկապատել և խըստիվ արգելել անասունների մուտքը.

5. Բացի վերոհիշյաներից, այն վայրերում, վորտեղ հածախակի սիրիակախտ և պատահում, անասուններին կարելի յե պատվառտել նախագուշական նպատակով:



ԻՆՉ ՄԻՋՈՑԱՌՈՒԽՄՆԵՐ ԿԻՐԱՌԵԼ ՍԻԲԻՐԱԽԸ ՀԱՅՏԱ-  
ԲԵՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Սիբիրախտ հիվանդության մասին կարելի  
յէ կասկածել ամեն անգամ, յերբ անասունները  
հանկարծակի առանց վորեւ հայտնի պատճառի  
սատկում են, կամ անասունները հիվանդանում  
են ու միաժամանակ նրանց մարմիկ վրա արտ-  
գորեն մեծացող տաք ուռուցք ե գոյանում, և  
կամ անասունը խեթի (սանջույի) նշաններ ե  
ցույց աալիս ու թրիքը լինում ե արնախտում:

Թոլոր նման դեպքերում անասնատերը,  
գյուղխորհուրդը, խորհանտեսության կամ կոլտըն-  
տեսության վարչությունն իսկույն պետք ե հայտնի  
ամենամոտիկ անասնաբուժին կամ ուղղակի շրջա-  
նային հողային քաժնին, սակայն վրա հետ զու-  
գընթաց պետք ե ձեռք առնել հետևյալ միջոցները.

1. Հեռացնել առողջ անասուններին հիվանդ-  
ների մոտից և պահել առանձին տեղ, հիվանդ-  
ներին մեկուսացնել.

2. Խնամքով մաքրել այն շինությունները,  
վորտեղ գտնվել են հիվանդ անասուններ, իսկ  
հիվանդների հետ շփման մեջ յեղած առարկա-  
ները պետք ե ախտահանել նոր պատրաստված  
մոխրացի լուծույթով կամ կրային լուծույթով.

Հիվանդ անասունների տակ գտնված ազըը

և հողի վերին շերտն այրել տեղում կամ մոտիկ  
վայրում, անշուշտ զգուշանալով հրդեհ առաջաց-  
նելուց.

3. Զքերթել սատկած անասունի կաշին, այլ  
դիակը պահել մինչև անասնաբուժի գալը.

4. Պետք ե արգելել մարդկանց կամ անա-  
սունների մուտքը հիվանդ անասունների գտնված  
տեղը.

5. Անասնաբուժի գալուց և հիվանդությունը  
վորոշելուց հետո դիակը՝ կաշվով միասին, առ-  
նվազն յերկու մետր խորությամբ թաղել անաս-  
նագեղեցմանոցում:

Հիվանդությունը վորոշելուց հետո անասնա-  
բուժը, նայած հիվանդության տարածման աս-  
տիճանին, տվյալ վայրը հայտարարում ե անա-  
պահով և գրվում ե կարանտին (արգելանք),  
վորի ընթացքում արգելվում և առանց անաս-  
նաբուժի քույլսվության անասուն մորթել,  
սատկած անասունի կաշին ենթել, այլ տելեր  
անասուն տանել, անասնակեր կամ անասունա-  
հումույր (կաշի, մորթի, բուրգ, մազ, յեղջուր,  
սմբակ, վոսկոր և այլն), ինչպես նայել կար յեզ  
այլ կարնամթերք տեղափոխել:

Դրսից այդ վայրն անասուն բերելի ա-  
գելվում ե:

Արգելվում ե նայել անասունների ընդհա-

նուր ջրարքը յեզ արածեցնելը։ Հիվանդ տնասունների կաթը չի բուլաւում գործածել, իսկ առողջ անասունների կաթը կարելի յե գործածել, այն ել միայն յեփած վիճակում։

Կարանտինամ վերացվում ե միայն այն ժամանակ, յերբ 15 որվա ընթացքում վոչ մի հիվանդանալու կամ սատկելու գեպք չի լինում և բոլոր վարակված վայրերը յենթարկվում են ախտահանման։

### ՀԱՎԱՍԻԲԻՐԱԽՏԱՅԻՆ ՊԱՏՎԱՌՈՒՄՆԵՐԸ

Անասունների սիբիրախտով վարակվելու առաջն առնելու նպատակով կատարվում են հակասիբիրախտային պատվաստումներ։

Պատվաստված անասունները, նայած պատվաստման մեթոդին, յերկար կամ կարճ ժամանակով ազատվում են սիբիրախտով վարակվելու վտանգից, այսինքն՝ անասուններն ստանում են վարակամերժում (իմունիտետ)։

Յերկարատև վարակամերժում ստանալու նպատակով անասունները պատվաստում են այսպես կոչված «սիմուլտան» յեղանակով։ Ինչպես ասել ենք, սիբիրախտից մեկ անգամ հիվանդացած և առողջացած անասունը յերկարատև վարակամերժում ե ստանում։ «Սիմուլտան» կոչված յեղանակով պատվաստումների նպատակն ել հենց

այն ե, վոր անասուններն արհեստական ձևով հիվանդանան ու առողջանան, վորպեսզի յերկարատև վարակամերժում (իմունիտետ) ստանան։

«Սիմուլտան» յեղանակով պատվաստում կատարելու համար գործ ե ածվում սիբիրախտի թուլացրած մանրեններից պատրաստված վակցին և հակասիբիրախտային շիզուկ, վորոնք սրբակվում են անասունի կաշվի տակ։ Վակցինը հիվանդացնում ե անասուններին սիբիրախտով թեթև կերպով, իսկ հակասիբիրախտային շիջուկը, վոր բուժիչ հատկություն ունի, թույլ չի տալիս, վոր անասունը սատկի։ Հետեաբար, այս յեղանակով պատվաստված անասունը թեթև կերպով հիվանդանալով սիբիրախտով, առողջանում ե և դրա շնորհիվ ստանում ե յերկարատև վարակամերժում։

Հաղվագյուտ գեպքերում կարող են պատահել պատվաստումների հետեանքով սատկելու գեպքեր, այն ել շատ չնշին տոկոսով (0,5 տոկոսից վոչ ավել)։

Եյս յեղանակով պատվաստումները կատարվում են այնպիսի վայրերում, վորտեղ տարեց տարի նկատվում են սիբիրախտի գեպքեր։

Պատվաստումների ընթացքում առանձնապես կարևոր ե հետեել, վոր անասուններին սրսկվի և վակցին և հակասիբիրախտային շիջուկ, վորով-

հետեւ դրանցից մեկն ու մեկը չսըսկվելու դեպքում կարող են լուրջ հետեանքներ ստացվելու միայն վակցին սըսկելու դեպքում, անասունը կարող է հիվանդանալ ու սատկել, յեթե միաժամանակ շիջուկ չի սըսկվել, իսկ յեթե վակցին չի սըսկվում ու միայն շիջուկ չըսկվում, անասունն ստանում է միայն կարճատես վարակամերժում և հետագայում կարող է նորից հիվանդանալ ու սատկել: Այդպիսի թյուրիմացություններից խուսափելու համար նախ սըսկվում է հակասիրիբախտային շիջուկը անասունի վզի կաշվի տակ մի կողմից (որ, աջ կողմից), իսկ հետո սըսկվում է վակցինը, նույնպես վզի կաշվի տակ, բայց մյուս կողմից (ձախ կողմից):

Յերկարատես վարակամերժում ստանալու նըպատակով յերբեմն պատվաստում կատարվում է միայն վակցինով՝ յերկու նվագով. առաջին պատվաստումից 10—12 որ հետո կատարվում է յերկրորդ պատվաստումը: Այստեղ նույնպես անհրաժեշտ է հետեւ, վորպեսզի բոլոր կենդանիներն ել անպայման պատվաստվեն թե առաջին և թե յերկրորդ անգամ, հակառակ դեպքում կարող են կորստաբեր հետեանքներ ստացվել:

Առաջին անգամ սըսկված վակցինը յերկրորդից ավելի թույլ է. առաջին պատվաստումի ժամանակ կենդանիները չեն հիվանդանում և վարակամեր-

ժում չեն ստանում, այլ անասունների որդանիզմը նախապատրաստվում է յերկրորդ, ավելի ուժեղ, վակցինի պատվաստման: Հետեաբար, յեթե անասունները պատվաստված են լինում միայն առաջին վակցինով, նրանք հետագայում սիրիբախտով հիվանդանալու վտանգից զերծ չեն մնում, իսկ յեթե միայն յերկրորդ վակցինով են պատվաստվում, առանց նախապես առաջին վակցինով պատվաստվելու, այդ դեպքում անասունները կարող են հիվանդանալ իսկական սիրիբախտով ու սատկել:

Պատվաստումի վերոհիշյալ յերկու յեղանակներն ել կոչվում են «ակտիվ» յեղանակ, վորովինետես այդ յեղանակներով կատարված պատվաստումների հետեանքով ստանում են յերկարատես վարակամերժում:

Բացի պատվաստումի ակտիվ յեղանակներից, գոյություն ունի նաև այսպես կոչված «պասսիվ» յեղանակ, այդ յեղանակի եյությունը կայանում է նրանում, վոր անասուններին սըսկվում է միայն հակասիրիբախտային շիջուկ, վորը նրանց ապահովում է սիրիբախտով հիվանդանալու վրտանգից շատ կարճ ժամանակվա համար, այսինքն՝ անասուններին տախիս ե կարճատես վարակամերժում, վորը 2—3 շաբաթից ավելի չի տեսում: Այդ ժամանակամիջոցն անցնելուց հետո անա-

սունը նորից սիրիախտով վարակվելու սպառ-  
նալիքի տակ ե գտնվում:

Այս վերջին յեղանակով պատվաստումները  
(պաստիվ) կատարվում են այն ժամանակ, յերբ  
անասունների վարակման անխուսափելի վտանգ  
գոյություն ունի և կամ տնտեսության մեջ ար-  
դեն սիրիախտ ե յերեացել:

Ակտիվ յեղանակով պատվաստումի հետևան-  
քով հիվանդացած կթու անասունների կաթը չի  
կարելի գործածել:

### ՄԱՐԴԿԱՆՑ ՍԻՐԻՅԱՆՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԻ

Ինչպես վերեսում ասացինք, սիրիախտով  
հիվանդանում են բայց անասուններից նայել  
մարդիկ:

Սիրիախտով վարակվում են համարյա մի-  
այն այն մարդիկ, վորոնք խնամում են սիրիախ-  
տով հիվանդ կենդանիներին, կամ գործ են  
ունենում սիրիախտից սատկած անասունների  
դիակի հետ և կամ շփման մեջ են գտնվում  
սիրիախտով վարակված իրերի հետ:

Սիրիախտով վարակվելու վտանգին յենթա-  
կա յեն նաև այն բանվորները, վորոնք կաշվի,  
բրդի, մազի վերամշակման գործարաններում  
են աշխատում: Կաշեգործարանների, բրդի և  
մազի վերամշակման գործարանների բանվոր-

ները, մուշտակագործները, բամբակագործները,  
կոշկակարները և այլնման արհեստով զբաղվողները  
կարող են սիրիախտով վարակվել, յեթե նրանց  
գործածած հումույթը (կաշին, բուրդը, մազը և  
այլն) սիրիախտից սատկած անասուններից ե  
վերցված:

Սիրիախտով կարող են վարակվել նաև  
անասնաբուժները, սպանդանոցների բանվորները,  
մազավաճառները, հովիվները և այլն, վարակված  
անասունների կամ մասի հետ շփում ունենալու  
միջոցով: Մարդիկ վարակվում են նաև վարակ-  
ված միս ուտելով կամ վարակված հումույթից  
պատրաստված մուշտակների, տրեխների և այ-  
լի միջոցով: Պատահել են նաև սիրիախտով  
վարակվելու դեպքեր վարսավիրանոցներում՝ կեղ-  
տոտ ածելինների և վրձինների միջոցով:

Մարդիկ վարակվում են գլխավորապես իրենց  
կաշվի միջոցով, որինակ սէրիախտից վարակված  
անասունը մաշկելու ժամանակ բավական ե  
ձեռքի վրա ունենալ ամենափոքր մի քերծվածք-  
կամ վերք՝ սիրիախտով վարակվելու համար.  
Հանձերը նույնպես կարող են վարակման միջոց  
հանդիսանալ:

Մարդիկ կարող են վարակվել նաև ողի մի-  
ջոցով, ինչպես, որինակ բրդի գործարաններում  
աշխատողները կամ դյուղական բուրդ գզողները,

վորոնք բուրդը թափ տալու ժամանակ սիրի-  
րախտի սպորները տարածվում են ողի մեջ և  
վարակում ողը:

Սիրիրախտով կարելի յե վարակվել նաև մար-  
սողական գործարանների միջոցով՝ վարակված  
միս ուտելով:

Մարսողական և շնչառական գործարանների  
միջոցով վարակված մարդիկ շատ դժվար են  
առողջանում, իսկ կաշվի միջոցով վարակվողները,  
յեթե ժամանակին ու կանոնավոր բժշկվեն,  
դրեթե միշտ առողջանում են:

Կաշվի վրա սիրիրախտը նկատվում է գլ-  
խավորապես ձեռքերի, յերեսի և զզի վրա։ Վարակ-  
ված տեղի վրա նախապես գոյանում և մուդ  
կլորածե պալար՝ կարմիր յեղբերով։ Աստիճանա-  
բար այդ պալարի շուրջն ուռչում է և կաշին  
կարմրում։ Նետո բարձրանում է տաքությունը։  
Ուռուցքն աստիճանաբար տարածվում է, վա-  
րակն անցնում է արյան մեջ և մարդը մահա-  
նում է։

Սիրիրախտի պալարը յեթե ժամանակին  
խարվի (դաղվի), կարելի յե ընդհանուր վարակ-  
ման առաջն առնել։

Ներկայումս մեծ հաջողությամբ գործ է  
ածվում նաև հակաժանտախտային շիջուկը մարդ-  
կանց վերաբերյալ։ Այդ շիջուկը սրսկելով հիվանդ

մարդու մաշկի տակ՝ հիվանդության առաջն  
առնվում է։

Սիրիրախտ հիվանդությունից մարդկանց  
մահանալու առաջն առնելը, ինչպես տեսանք,  
հնարավոր է։ Դրա համար անհրաժեշտ է, սիրի-  
րախտի փոքրիկ կասկած լինելու գեպքում, իս-  
կույն և յեթ դիմել բժշկի, վորը ցույց կտա  
համապատասխան բուժողնություն։

Սիրիրախտը մեր անսամնապահության զար-  
գացման վտանգավոր թշնամիներից մեկն է։  
Նրա գեմ պայքարը դժվարանում է գլխավորա-  
պես այն պատճառով, վոր գեռ ևս մեր կոլտըն-  
տեսական մասսան, աշխատավոր զյուղացիու-  
թյունը չեն գիտակցում նրա լուրջ նշանակու-  
թյունը և չեն աջակցում այդ հիվանդությունն  
իսպառ վերացնելու համար։ Ընդհակառակը, շատ  
հաճախ, անգիտակցաբար, իրենք են պատճառ-  
դառնում հիվանդության տարածմանը։

Մինչդեռ անասնապահության զարգացման  
հաջողության նախապայմաններից մեկը վարա-  
կիչ հիվանդություններից բուժումն է, վորից ամե-  
նից վտանգավորը թե մարդկանց և թե անասուն-  
ների համար հանդիսանում է սիրիրախտը։

Սիրիրախտի գեմ կարելի յե պայքարել։ կա-  
րելի յե նրա պատճառած վնասները հասցնել նվա-  
զագույնի, սակայն դա առանց կաղմակերպված


աշխատավորության ակտիվ մասնակյության հնարագործության չեզ:

Այստեղ պիտակորը վոչ թե բուժական միջոցառումներն են, այլ նախազգուշական միջոցառումները—անասնագերեզմանոցների կառուցումը, դիակների թաղումը, կարանտինային միջոցները և այլն, վորի համար անհրաժեշտ ե աշխատավորության ակտիվ գիտակից մասնակցությունը:

Կենսագործելով բոլոր անհրաժեշտ միջոցները, ձեռք-ձեռքի տված անամնաբուժական կազմի հետ և նրա ցուցումներով ել ավելի պետք ե ուժեղացնել մեր պայքարը, վերացնելով սոցիալիստական անասնապահության արգելակող բոլոր վարակիչ հվանդությունները, վորոնց թը-վում և սիրելի բախտը:

ИМВ. №

### ԱՆԱՍՈՒՐԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՑՈՒՄ





ԳԻՆ  
ЦЕНА 30 հ.  
ր.

405

Н АРМ.  
2-33443



Р. АРМЕНЯН

## СИБИРСКАЯ ЯЗВА

Сельхозгиз

1934

Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0267685

6719

APM

2-3314a